



ԺԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 10.

1856

ՄԱՅԻՍ 15.

## ՈՂՋ ԼԵՐ ԹԱԳՈՒՆԻ

Ողջոյն քեզ, Կոյս Մարիամ,  
Ողջոյնք առ քեզ աստուածեան.  
Ողջոյն յըղծից մեր բոլոր,  
Ողջոյն յորդուոցդ հեռաւոր.  
Որ քան երկնից եւ երկրի  
Բազմել փառք թաղուհի,  
Սիրեա սըրտից մեր խոնարհ  
Յաւէրթութեամբ պատուել մայր.  
Ողջ լեր, ողջ յամայր:

Ո՛հ, ի՞նչ է քեզ քաղցուենի  
Անունդ հընչէ մայրենի.  
Քանի՜ յօժար զայդ ի կամս  
Գոչեն քեզ սիրտք յերկուս կեանս,  
Որ դու միոյն ես ծընող,  
Կենդանութեան առբերող,  
Դու եւ ի միւս աստ, ո՛վ Կոյս,  
Կեանք, քաղցրութիւն մեզ, եւ յոյս  
Յերանական լոյս:

Ըղբեզ, ըղբեզ փըրկարար  
Մեզ ճանաչեմք նախամայր.  
Որ ոչ յԵւայն խորափիտ  
Ծընար մահու զմեզ հովիտ,  
Այլ յերկնաճենմն արտեւան  
Կենաց լերին Գողգոթեան.

Ուր զկուսութիւնդ՝ արդաւանդ  
Եդ Յիսուսիդ շունչ յաւանդ,  
Եւ սէր խանդակաթ:

Մայր, զայգբանի քո զերկունս  
Մի մոռասցին թէ յայժմուս,  
Որ ըզգոսին մեզ ի գրաւ  
Ունիմք յարտօսը եւ ի ցաւ:  
Որ ի մահուն դըժընդակ  
Գըլորեցաք սեաւ ծըմակ,  
Դու ի բարձուէդ նայեա մեզ,  
Լուր որդւոյդ՝ մեզ թէ չըսես,  
« Ահա որդիք քեզ »:

Որդիք. — սըրբեա զարտասուս,  
Եւ ցոլացո զսիրոյդ լոյս.  
Որդիք. — մեզ ցոյց ըզՅիսուս,  
Զորդիդ, զեղբայր մեր եւ յոյս.  
Որդիք. — ա՛հ, ցերբ ի ծոցոյդ  
Պանդըխտիցիմք մեք անբոյթ.  
Յերբ հեծիցեմք առ յերկրէս  
Եւ ոչ յերկնից՝ ի քո տես,  
« Մայր մեր, ողջոյն քեզ »: